ՀՐԱՆՈՒՇ ՁԱՔՅԱՆ

ԲԱՌԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆ

Լեզվի քերականությունն ու բառային կազմը սերտորեն կապված են միմյանց հետ, նրանց զարգացման օրենքները պայմանավորված են միմյանցով և լրացնում են իրար: Դրանով հանդերձ նրանցից յուրաքանչյուրն ունի իր դրսևորումներն ու դերը լեզվի ընդհանուր համակարգի մեջ:

Լեզվի բառային կազմը գտնվում է անընդհատ փոփոխման ու համալրման պրոցեսի մեջ. այն անմիջականորեն կապված է մարդու գործունեության հետ և նոր բառերի ու հասկացությունների միջոցով արտացոլում է բոլոր այն տեղաշարժերը, որոնք կատարվում են հասարակության տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում: Լեզվի բառային կազմի մեջ կատարված այդ փոփոխություններն արտացոլվում են հիմնական բառաֆոնդի մեջ, որը նույնպես համալրվում և հարստանում է նոր տարրերով: Ինչպես բառային կազմը, նույնպես և հիմնական բառաֆոնդը պատմական կատեգորիաներ են և լեզուն կրող ժողովրդի զարգացմանը զուգընթաց համալրվում և հարստանում են: Նրանք ժողովրդի զարգացման տարբեր շրջաններում ունեն նոր վիճակներ, որոնք միմյանց չբացասելով հանդերձ տարբերվում են իրարից իրենց ծավալով և բառեր կազմելու հնարավորություններով, հետևաբար նաև զարգացման նոր օրենքներով:

Գրաբարի բառային կազմը, մեզ ավանդված գրավոր աղբյուրների տվյալներով, ընդգրկում է ավելի քան 60 հազար բառ (սա, ըստ էության, գրավոր լեզվի գրաբարի բառապաշարն է, որից դուրս է մնացել բառերի մի զգալի քանակություն, որ գործածական է եղել բանավոր խոսքի մեջ):

Գրաբարի բառերի մեծ մասն աչքի է ընկել քերականական տարարժեքությամբ, ինչը դրսևորվել է թե բառերի խոսքիմասային պատկանելության, թե բայերի կրկնասեռության մեջ:

Օրինակ «աղքատ», «դավաճան», «փայլ», «ագարակ», «շփոթ» և այլ բառեր համատեղել են գոյականի և ածականի, «ահագին», «կիսաբաց», «թյուր», «անդրդվելի» և այլ բառեր ածականի և մակբայի, «կողմ», «դուրս», «մեջ» բառերը գոյականի և կապի, «մերթ», «ապա» բառերը մակբայի և շաղկապի և այլն: Բազմաթիվ բայեր քերականորեն եռարժեք, անգամ

քառարժեք են գրաբարում, ինչպես «սխալ», «սուտ», «աջ» (գոյ.IIածIIմկ.II), «մերկ» (գոյ.IIած.IIմկ.IIմխդ.) և այլն:

Բայերի տարարժեքությունը դրսևորվել է կրկնասեռության («աղոթել», «բողբոջել», «բռնակալել», «երդվել», «խորհրդակցել», «ճապաղել», «ողողանջել» և այլն), ինչպես նաև սեռային զուգահեռության մեջ («աղմկել», «ապավինել», «բանդագուշել», «զգվել», «սպրդել», «ճեպել») և այլն:

Ճիշտ է, ժամանակակից հայոց լեզվի բառապաշարում էլ կան քերականական տարարժեքություն ունեցող բառեր, բայց գրաբարի համեմատությամբ դրանց թիվը շատ փոքր է: Այս հանգամանքը վկայում է, որ շատ բառեր հայերենի պատմական զարգացման ընթացքում անցել են քերականական մենարժեքության: Այդ անցումը, ըստ համապատասխան փաստական նյութի ուսումնասիրության, պայմանավորվել է նախ և առաջ բառիմաստի կրած փոփոխություններով: Ինչպես գիտենք, բառիմաստը գտնվում է պատմականորեն տեղի ունեցող փոփոխությունների գործընթացում, ունի իր պատմական զարգացումն ու դրա օրինաչափությունները: Բառիմաստի փոփոխության տեսակներից է բառիմաստի նեղացումը, որը տեղի է ունենում հասկացության ծավալի փոքրացումով բառի գործածության ոլորտի նեղացման և մասնավորման հետ: Սա էլ, ինչպես նշեցինք, պայմանավորված է բառապաշարի իմաստաբանական զարգացմամբ, որը ոչ միայն բառերի նորանոր իմաստների ստացումն է, այլև որոշ իմաստների հնացումը: Բնական է՝ եթե հնացող և ժամանակի հետ գործածությունից դուրս եկող իմաստը պայմանավորում էր քերականական առանձին արժեք, ուստի բառը կորցնում է նաև այդ արժեքը: Ներքոհիշյալ բառերը հենց նշված հանգամանքի պատճառով էլ կորցրել են գրաբարում ունեցած քերականական տարարժեքությունը և արդի հայերենի բառապաշար են մուտք գործել քերականական մեկ արժեքով: Ասվածը ցույց տանք աղյուսակի ձևով, որն ավելի ակնհայտ կդարձնի խոսքիմասային տարարժեքությունից մենարժեքության անցումը:

	ԳՐԱԲԱՐ	ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆ
ոճիր	գոյ.-սպանություն, չարագործություն ած. չար, անօրեն, դաժան ՆՀԲ 515, ԳԲ 337	գոյ – ծանր հանցանք,փխբ. մասսայական կոտորած, սպանդ ԱՀԲԲ 22
աղաջուր	գոյ. -աղի ջուր ած- ժանտ, անզգամ ՆՀԲ 34, ԳԲ 28	գոյ. – որոշակի աստիճանի աղային լուծույթով պատրաստված ջուր՝ թթու դնելու, մթերքներ պահելու համար: ԱՀԲԲ 22

շամանդաղ	գոյ. -մեգ, մշուշ, մթագնություն ած.- նսեմացած, մթագնած ՆՀԲ 463, ԳԲ 306	գոյ.- մեգ, մառախուղ, արևի ճառագայթների շերտի մեջ երևացող փոշեհատիկներ ԱՀԲԲ 1096
մակարդակ	գոյ.- մակերևույթ ած.- հարթ, կոկիկ ՆՀԲ 193, ԳԲ 137	գոյ.- բարձրություն կազմելու չափը, պայմանական հարթություն, հատկագիծ, փխբ. որևէ բանի զարգացման որակի աստիճանը ԱՀԲԲ 953
համբույր	գոյ - շուրթերի հպվելը մեկին կամ մի բանի, պաչ, սեր, միություն ած.- հաշտ, միտբան ՆՀԲ 27, ԳԲ 27	գոյ.- շուրթերով մեկին կամ մի բանի հպվելը ԱՀԲԲ 807
խիղճ	գոյ.- պատասխանատվություն սեփական արարքների հանդեպ, խղճմտանք ած.- արատավոր, չար ՆՀԲ 944, ԳԲ 569	գոյ.- իր արարքների ներքին գնահատում, գութ, կարեկցանք, կրոնական համոզմունք, դավանանք ԱՀԲԲ 579
մրցանակ	գոյ.- հաղթողին տրվող պարգև ած.- հեռավոր ՆՀԲ 473, ԳԲ 279	գոյ.- մրցության մեջ հաղթողին տրվող պարգև ԱՀԲԲ 1036
բացատ	գոյ.- դատարկ, ազատ տեղ, անջրպետ ած.- հեռավոր ՆՀԲ 473, ԳԲ 279	գոյ.- բաց տեղ, արանք, անտառի մեջ ազատ տարածություն. բաց տեղ քաղաքի շրջակայքում ԱՀԲԲ 182
արևելակողմ	գոյ.- արևելյան կողմ ած.- արևելյան կողմում գտնվող ՆՀԲ 3539, ԳԲ 209	գոյ.- արևելյան կողմ ԱՀԲԲ 131
ճակատամարտ	գոյ.- պատերազմ, կռիվ ած.-ճակատամարտող, պատերազմող. պատերազմական ՆՀԲ 166, ԳԲ 119	գոյ.- ռազմական գործողություն, կռիվ փոխ - մենամարտ, մաքառում. դժվարին գործի հաղթահարման ճիգ ԱՀԲԲ 933
կառարշավ	գոյ.- կառքով արշավելը, կառքերով մրցարշավ ած - կառքով արշավող ՆՀԲ 1057, ԳԲ 634	գոյ.- կառքով արշավելը ԱՀԲԲ 696
մահճակալ	գոյ.- մահիճ ած.- անկողնում ընկած (հիվանդ) ՆՀԲ 200, ԳԲ 140	գոյ.- քնելու տնային կահույքի առարկա, որի վրա ննջում են անկողին ԱՀԲԲ 959
արժան	գոյ.- իրավունք, օրենք ած.- արժանավոր, արժանի ՆՀԲ 554, ԳԲ 210	ած - արժանի, վայել, պատշաճ ԱՀԲԲ 131
հին	գոյ.- նախնի ած.- վաղեմի, հինավուրց, մաշված ՆՀԲ 98, ԳԲ 71	ած.- վաղեմի, հնավանդ, նախկին թարմությունը կորցրած, հմտացած. փորձված ԱՀԲԲ 872

էական	գոյ.- աստված ած.- կարևոր, իսկական ՆՀԲ 759, ԳԲ 455	ած.- հիմնական, բուն էությունը կազմող, գլխավոր, նշանակալից ԱՀԲԲ 387
վերջավոր	գոյ.- ծայր ած.- զարդարուն ծայրեր ունեցող ՆՀԲ 816, ԳԲ 522	ած.- վերջ ունեցող, վերջավորություններով կազմված ԱՀԲԲ 1385
կիրթ	գոյ.- մարգանք, հրահանգ, կրթություն ած.- սովորած, վարժված, մարզված ՆՀԲ 1100, ԳԲ 659	ած.- կրթված, դաստիարակված, բարեկիրթ ԱՀԲԲ 736
մռայլ	գոյ.- մշուշ, խավար, մեգ ած.- աղոտ, մթին, միգամած ՆՀԲ 301, ԳԲ 104	ած.- միգապատ, մութ, խավար, գորշ, անհրապույր, փխբ. ծանր, անհեռանկար. վշտով համակված, թախիծ արտահայտող, խոժոռ, խիստ, չարագուշակ ԱՀԲԲ 1029
նսեմ	գոյ.- աղջամուղջ, խավար ած.- աղոտ, մթին	ած.- թույլ, աղոտ, փխբ. տկար, անզոր, չնչին, ստորացած ԱՀԲԲ 1025
ծովեզրյա	գոյ.- ծովեզրյա տեղ ած.- ծովեզերքում գտնվող, ծովափնյա ՆՀԲ 1026, ԳԲ 616	ած.- ծովեզերքին գտնվող, ծովեզերքին հատուկ, ծովեզերք կազմող ԱՀԲԲ 659
անջրդի	գոյ.- անջրդի վայր ած.- անջուր ՆՀԲ 232, ԳԲ 139	ած.- անջուր, չջրվող ԱՀԲԲ 78
գոռոզ	գոյ.- բռնավոր, իշխան, սատանա, թագավոր ած.- բուռն, խրոխտ, բռնավորական ՆՀԲ 572, ԳԲ 337	ած.- ինքնահավան, մեծամիտ ԱՀԲԲ 253

Ինչպես տեսնում ենք, իմաստաբանական գործընթացները խթան են հանդիսացել շատ բառիմաստների մթագնման համար: Բառապաշարի կատարելագործումը ենթադրում է ոչ այնքան նոր բառերի ու իմաստների մուտքը լեզվի բառային կազմի կամ իմաստաբանական համակարգի մեջ, որքան լեզվում արդեն գոյություն ունեցող բառերի զանազան կարգերի փոփոխությունները, որոնք ուղղված են լեզվի համակարգայնության և միօրինակության ծավալմանը, բառագործածությունների և բառիմաստների ճշգրտմանը, բառակազմական տիպերի ու կաղապարների միասնականացմանը:

Գրաբարում կրկնասեռ բայերն ունեն լայն իմաստային դաշտ, որն էլ ապահովում է անցողիկության և անանցողիկության համատեղումը նույն բառույթում: Կրկնասեռ բայերի մի խումբ պատմական զարգացման ընթացքում կորցնում է ներգործական կամ չեզոք սեռի հատկանիշներ ունեցող

բայիմաստները, ուրեմն և կրկնասեռությունը, ինչի հետևանքով ժամանակակից հայերենի բառապաշար մուտք է գործում միայն մեկ չեզոք կամ ներգործական սեռի նշանակությամբ:

	ԳՐԱԲԱՐ	ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆ
մաղթել	նբ. չբ. – 1.աղոթքով խոսել 2.միջնորդել 3. աղաչել (ՆՀԲ 199, ԳԲ 141)	չբ -մեկին բարի ցանկություն հայտնել, բարեմաղթել ԱՀԲԲ 960
տգիտանալ	նբ. չբ -1.տգետ դառնալ, անգիտանալ 2. չգիտենալու տալ, անտեսել (ՆՀԲ 861, ԳԲ 552)	չբ - տգետ դառնալ, իմացածը մոռանալ ԱՀԲԲ 960
գարշել	նբ. չբ. -1.զզվել 2. գարշելի համարել (ՆՀԲ 532, ԳԲ 310)	չբ- զզվել, ստոր, անվայել համարելով հրաժարվել ԱՀԲԲ 223
թևակոխել	նբ. չբ.-թևերին ուժ տալ թռչելու համար, ջանալ ձգտել մի բանի, մտածել, դեպի մի կողմ հակվել, իր կողմը գրավել, համոզել ՆՀԲ 808, ԳԲ 486	չբ - անցնել, մտնել, հասնել մի վիճակի ոտք դնել, գործունեություն ծավալել ԱՀԲԲ 433
բարեգործել	նբ. չբ.-բարի գործ կատարել, երջանկանալ, բախտավորվել, խնամել, ներգործել (ՆՀԲ 446, ԳԲ 263)	չբ - բարի գործ կատարել ԱՀԲԲ 174
խորհրդակցել	նբ. չբ.- իբրև խոսակից խորհուրդ տալ, թելադրել, խրատել մի բան, հորդորել, գրգռել (ՆՀԲ 978, ԳԲ 587)	չբ- միասին քննարկել որևէ բան, խորհուրդ անել, մեկի կարծիքը, խորհուրդն հարցնել ԱՀԲԲ 605
կրթել	նբ. չբ. - մարզել, վարժեցնել, սովորեցներ, հոժարել, ջանալ, մի բանի ձգտել, հետամուտ լինել ՆՀԲ 1134, ԳԲ 679	նբ - որոշ ուղղությամբ դաստիարակել, ուսուցանել, բարեկրթություն սովորեցնել ԱՀԲԲ 774
դիտել	նբ. չբ. - 1.ուշի ուշով զննել 2. ուշադրություն դարձնել 3. լրտեսել ՆՀԲ 627, ԳԲ 371	նբ - նայել, զննել, կարծիք հայտնել, սպասել, համարել, դիտարկել, նկատի ունենալ, իմանալ ԱՀՀԲ 302
դրժել	նբ. չբ - ենթությամբ մահ պատճառել, վնասել, ուխտազանց լինել, դավաճանել ՆՀԲ 621, ԳԲ 383	նբ - պայմանը խախտել, դավաճանել, ժխտել, ուրանալ ԱՀՀԲ 312
տարփոխել	նբ. չբ.- բարձր ձայնով մի բան հռչակել, լուր տարածել, ավետել ՆՀԲ 860, ԳԲ 550	նբ - ի լուր ամենքի հայտարարել, տարածել, մեծադղորդ գովասանքներով հռչակել ԱՀԲԲ 1425
գուժել	չբ. նբ. - գույժի ձայն բարձրացնել, ողբալ, ճչալ, վատ լուր հաղորդել ՆՀԲ 579, ԳԲ 340	նբ- վատ լուր հաղորդել ԱՀԲԲ 266
երիվարել	նբ. չբ. - երիվար վարել, քշել, ձիավարել, ձի լծված կառք նստել և կառավարել ՆՀԲ 684 ԳԲ 409	նբ - երիվար քշել, ձիավարել ԱՀԲԲ 344

Գրաբարում մեկ բառույթի մեջ 2 քերականական սեռի իմաստներ համատեղող կրկնասեռ բայերից բացի կան սեռային զուգահեռություն ունեցող հարյուրավոր բայեր, որոնք Ե - Ի լծորդների փոփոխությամբ գործածվել են անցողական և անանցողական իմաստներով: Արդի հայերենի բառապաշարում, չնայած Ե - Ի լծորդությունների պատմական միավորմանը, այս բայերի գերակշիռ մեծամասնությունը դարձյալ միասեռ է: Ընդ որում, անցումը միասեռության ընթացել է ինչպես կրկնասեռությունից չեզոք, այնպես էլ կրկնասեռությունից ներգործական սեռ ուղղություններով: Ինչպես խոսքիմասային տարարժեքությունից մենարժեքության, կրկնասեռությունից միասեռության, այս պարագայում էլ անցմանն օժանդակել է նաև բայիմաստի փոփոխությունը, բառի բազմիմաստության շրջանակների նեղացումը:

	ԳՐԱԲԱՐ	ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆ
ապավինել	նբ - ապավինել տալ չբ- մեկի հովանավորության տակ մտնելը ՆՀԲ 275, ԳԲ 165	չբ - մեկի հովանավորության տակ մտնել, պատսպարել ԱՀԲԲ 97
ազազել	նբ - չորացնել, ցամաքեցնել չբ - չորանալ, ցամաքել ՆՀԲ 4, ԳԲ 12	չբ - չորանալ, ցամաքել, նիհարել ԱՀԲԲ 4
բանդագուշել	նբ- բանդագուշեցնել չբ- ցնորվել, հիմարանալ, պատրանքի մեջ ընկնել, տատամսել, մոլորվել ՆՀԲ 436, ԳԲ 257	չբ - զառանցել, ցնորական բաներ խոսել ԱՀԲԲ 168
սողոսկել	նբ - սպրդել տալ չբ - սողոսկելով ներս մտնել ՆՀԲ 727, ԳԲ 464	չբ - սղալով ներս սահել, թափանցել, փխբ. ծգվել, փխբ. ներթափանցել փխբ. խցկվել ԱՀԲԲ 1317
ծգնել	նբ.- նեղել, ճնշել, չարչարել չբ - ծիգ, ջանք թափել, ջանալ, ճնշվել, նեղվել, տառապել,տագնապել, մրցել,նահատակվել, ծգնավորի կյանք վարել, զրկանքներ հանձն առնել ՆՀԲ 177 ԳԲ 126	չբ - ուժերի լարումով աշխատել, ծիգ, ջանք թափել, ծգնավորի կյանք վարել, փխբ. լարված աշխատել, փխբ. ապարդյուն ջանքեր գործադրել ԱՀԲԲ 940
ծեպել	նբ. - շտապեցնել, ստիպել, հարկադրել, նեղը գցել չբ - աճապարել, շտապել, դիմել, ընթանալ, փույթ ունենալ, հոգ տանել, ծիգ գործադրել ՆՀԲ 179, ԳԲ 127	չբ շտապել, փութալ, աճապարել ԱՀԲԲ 941
հանդերձել	նբ պատրաստել, սարքել, կազմել, հարդարել, շտկել, ճանապարհի անհրաժեշտ պիտույքները հոգալ չբ - կազմ ու պատրաստ լինել, մի	նբ - պատրաստել, կահավորել ԱՀԲԲ 818

	բանի համար պատրաստ լինել,պատրաստություն տեսնել 41,36	
հարակցել	նբ - կցել, կապել, միացնել մի բանի հետ, եղածի վրա մի բան ավելացնել, կցել, կապակցել, միավորել, հարմարեցնել իրար չբ - նույն նշ. ՆՀԲ 342, ԳԲ 230	նբ - կցել, հարել, առնչել, կապել, միավորել, զուգորդել, զուգադրել ԱՀԲԲ 841
քաջալերել	նբ -սիրտ տալ, խրախուսել, հորդորել, մխիթարել չբ - սիրտ առնել, սրտապնդվել, վստահություն ստանալ, արիանալ ՆՀԲ 983, ԳԲ 623	նբ.- սիրտ տալ, խրախուսել, խրախուսիչ դիրք բռնել ԱՀԲԲ 1554
հառել	նբ- ձգել, մեկնել, պարզել կարկառել չբ - աչքը, միտքը մի բանի սևեռել, աչքերը հառած նայել, զննել, տնտղել, նկատել	նբ - ձգել, մեկնել, երկար նայել ԱՀԲԲ 827

Կարելի է բերել բազմաթիվ համանման օրինակներ, երբ բառի իմաստային դաշտում կատարված փոփոխությունը հանգեցնում է նաև բառի քերականական արժեքի փոփոխության, տվյալ դեպքում տարարժեքության վերացման:

Քերականական իմաստափոխությունների չափազանց մեծ ընդգրկում ունենալը խոսում է հայերենի քերականական համակարգի զարգացման բնույթի մասին. գրաբարի քերականորեն տարարժեք բառերի խոսքիմասային տարարժեքությունից մենարժեքության, կրկնասեռությունից միասեռության անցումը վկայում է հայերենի քերականական համակարգի կանոնակարգման, միօրինականացման և համակարգվածության մասին:

ՀԱՍՍԱՌՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ած. - ածական
գոյ. - գոյական
մկ. – մակբայ
նխդ. – նախդիր
ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երևան, 1979
ԳԲ - Ռ Ղազարեան, Գրաբարի բառարան, Երևան 2000
ԱՀԲԲ - Էդ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976